պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

«Պետական տուրքի» մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացվող, այդ թվում՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի կողմից ներկայացվող հայցադիմումների համար՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Տվյալ դեպքում, հայցադիմում ներկայացնելիս հայցվոր կողմը վճարել է պետական տուրքի անհրաժեշտ չափի գումար, ուստի հաշվի առնելով այն, որ հայցը մերժվում է, Դատարանը կարծում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

(VI). Եզրափակիչ մաս.

Դատարանը, հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով, 17-րդ հոդվածի 7-րդ մասով, 27-րդ հոդվածի 2-րդ մասով, 179-րդ, 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 360-362-րդ հոդվածներով,

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Արտակ Մարտիրոսյան Համլետի» Ա/Ձ-ի հայցն ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ Արտակ Մարտիրոսյան Համլետի ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի 18.10.2023 թվականի թիվ 144-Ա/3 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ

Ծանոթություն.

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ